

լած էր մատաղ անոր երեւակայութիւնը դեռ Թիֆլիսէն, իբրեւ արժանաւոր հիացող մը Ռասքոլնիքովի: Չէի ճանչնար այդ անունը: Ու իմ տգիտութիւնը փառաւոր հաճոյք մը արժեց բժշկական ստուտենտին: Բայց պէտք է քալել...: Կը դպիմ, ինչպէս երբեմն կ'ընենք մատի ծայրով, բոցի մը որային, Մաթիկին ահաւոր հոգեկան տագնապին, որ անոր բառերով պարուրուած պայծառ խարոյկ մըն էր, նման մորենիին, որ բոց է ամբողջ, բայց կայծ է նաեւ, նեարդ ու հիւսք, հրդեհին մէջ իսկ իր բաբախումը, իր շէնքը պահող: Խորանուրբ, համբուրելի տառապանքով մը, որ նոր էր ինծի, քանի որ մեր լացը միայն մեր դժբախտութիւնը ունէր աղբիւր ու նպատակ, Մաթիկ մեծցուց ռուսական ցաւը, աւելի խորունկ, աւելի ահաւոր, նոր բառով մը՝ համամարդկային: Հիացումով ես կը հետեւէի այդ պզտիկ մարդուն բերանէն փրթած հսկայական տեսիլքին, աշխարհի մը մէջ, ուրկէ հալած, չքացած էին չարիքին բոլոր աղջը, աշխը, ոստայնը: Մաթիկ մարդկային տառապանքին մեծ ծովը կը դնէր ռուս արեւին աչուրներուն ու հիփնոսացած, խենթացած կ'ոգեկոչէր ցամքիլը այդ ծովուն: Անհաւասարելի մարդէ՛ր, այդ յեղափոխականները, աստուածներու չափ ընդարձակ սիրտով, որպէսզի ծովերէն հանուած մրուրը ցաւին ըլլային ընդունակ իւրացնելու: 1900ին, մարդկութիւնը փրկագործելու նոր այդ միասիւքը չէր գտած մեր օրերու յստակ իր շէնքը, ուր վայելքին բաշխումը կը մնայ տիրական կնիք, ցաւին համար յատուկ կնիքով մը: 1900ին վայելքէն առաջ, ցաւին չքացումն էր հիմնական օրակարգը: Ու Մաթիկին կիսաստուածները պատրաստ էին ամէն բան զոհելու, հերիք է, որ այդ ողջակէզը ապահովէր պոռտիկ մը երկրաւոր երջանկութիւն, զանգուածներուն մռայլ, գրեթէ անասնացած անտարբերութիւնը վիրաւորող...

Ընկեր Մաթիկին ես չհանդիպեցայ անկէ ետքը, փաղանգին մէկը այն բոլոր խօսողներուն, որոնք նիւթ ունէին այդ երկրաւոր դրախտին ճարտարապետութիւնը եր-